

Կրկնապատում են՝

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի ղեկավարի ժամանակավոր
պաշտոնակատար, պրոֆեսոր Աշոտ Խոնեցյան



ԿԱՐՕՒՔ

Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի
Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի
2021թ. հոկտեմբերի 26 հ. 5 նիստի՝
Գայանե Ռոբերտի Պողոսյանի
«Ուրարտուի (Վանի թագավորության) կերպարվեստի պատկերագրական
առանձնահատկությունները»
ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն»
մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության վերաբերյալ

Նիստին մասնակցել են Արվեստի պատմության, տեսության և
մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Ս.
Մելիքյանը, Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Հակոբյանը, արվեստագիտության
թեկնածուներ Ա. Բաղդասարյանը, Ս. Գրիգորյանը, Ն. Նադարյանը, հոգեբանական
գիտությունների թեկնածու Զ. Մալոյանը, ասիստենտ Վ. Գամաղեյանը և ամբիոնի
մյուս անդամները:

Ատենախոսությունն ուսումնասիրում է մեզանում կարևոր պատմական
շերտերից մեկը՝ Վանի թագավորության պատկերագրական
առանձնահատկությունները, որոնք մինչ այսօր միասնական ուսումնասիրված չեն
եղել:

Ներկայացված աշխատանքը ստացված փորձ է վերը նշված թեման քազմակողմանի լուսաբանման տեսանկյունից:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հապավումների ցանկից, աղյուսակների ցանկից, աղյուսակներից:

Ներածության մեջ հեղինակը հիմնավոր ներկայացրել է բոլոր պահանջվող դրույթները՝ շեշտադրելով, որ թեմային նվիրված արվեստաբանական հանգամանակից վերլուծությունները սակավաթիվ են, իսկ ուրարտական հնավայրերում հայտնաբերված տարբեր իրերի նշանակությունն ու դրանց պատկերային համակարգի խորհրդաբանությունը թերևս ամբողջովին պարզաբանված չեն: Կարևորում ենք այն հանգամանքը, որ վերջին տարիներին ուրարտագիտությունը մեծ նվաճումների է հասել, սակայն դեռևս վերջնականապես լուծված չեն Վանի թագավորության խորհրդավոր պատկերագրության անհայտ, դարերի մշուշում թաքնված գաղտնիքները, որոնք կարիք ունեն պարզաբանման:

Հիմնական շարադրանքը բաղկացած է երեք գլխից.

Առաջին գլուխը կրում է «Որմնանկարչություն» խորագիրը, որն էլ երեք ենթագլուխներով ուսումնասիրում է ուրարտական բնակավայրեր Թեյշեբահինիից, Էրեբունիից, Ալթին-թեփեից հայտնաբերված որմնանկարների հորինվածքային առանձնահատկությունները, բովանդակությունն ու խորհրդաբանությունը, գեղարվեստական նկարագիրը:

Խորը ուսումնասիրության են ենթարկված «Մհերի դռան» արձանագրությունների հիման վրա կատարած աստվածների գործառույթից բխող պատկերագրական յուրահատկությունները: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Թեյշեբահինի պեղումնավայրից հայտնաբերված սկավառակապատկերը: Ատենախոսը խորհրդանիշի ուսումնասիրման ընթացքում քննության է ենթարկել դիտարկվող ժամանակաշրջանում առավել տարածում ստացած գունանյութերը և կիրառվող հիմնական գույները: Հիշարժան են տարված գուգահեռները հին աշխարհի հայտնի այլ մշակութային ժառանգությունների հետ: Ներկայացվող բնագավառի մեջ հետաքրքրություն է առաջացնում լաջվարդի դերը:

Ուսումնասիրված է զարդանախշի վերափոխությունն ու ոճավորումը՝ բուսական բնօրինակից մինչև պրոյեկցիոն գծապատկեր: Հանգամանակից դիտարկվում է պատմական ասպեկտը և արևի պաշտամունքը՝ իր հիմնական խորհրդանիշներով հանդերձ:

Առավել ծավալուն ուսումնասիրված են Էրեբունիի որմնանկարները: Արդյունքում ատենախոսը պահպանել է համեմատական վերլուծության սկզբունքը: Թեպետ Էրեբունիի որմնանկարներն առավել ուսումնասիրված են, սակայն հեղինակը գտնում է նոր եզրեր, որոնք բազմակողմանի կարողացել է ներկայացնել իր ատենախոսությունում: Արևի խորհրդանիշից գատ ատենախոսը քննության առարկա է դարձրել Ալթին-թեփեի աշխարհիկ բնույթի պատկերները. կանաչատերև ծառեր, որսի տեսարան: Էրեբունիի որմնանկարների հետ կատարված թեմատիկ համեմատությունները հեղինակին թույլ են տալիս եզրակացնել, որ դրանք համապատասխանում են ժամանակաշրջանի պատկերագրական և գաղափարական համակարգին:

Երկրորդ գլուխը կրում է «Քանդակագործություն» խորագիրը, որն էլ տրոհվում է երեք ենթագլուխների: Այստեղ որպես ուսումնասիրման առարկա են վերցրած աստվածությունների կերպարային լուծումները, ձկնակերպ կավե արձանիկներն իրենց ծիսական նշանակություններով, կնիքները այուժետային առանձնահատկություններով: Հատկապես նշանակալից են ուրարտական դիցարանի հիմնական աստվածների՝ Խալդի, Թեյշեբաի, Շիվինիի կերպարավորումները: Դիտարկելով աստվածներին պատկերող քանդակային ժառանգությունն՝ ատենախոսը զուգահեռներ է անցկացնում շումերական Էպոսի հերոսների և դրանց շրջապատող միջավայրի միջև: Դիտարկում է նաև վիշապամարտի թեման, դրսևորելով «վիշապի» (օձի) երկակի բնույթը՝ չարբացասական և իբրև պտղաբերության խորհրդանիշ: Ուշագրավ են խորհրդանիշների մեկնաբանությունները թե՛ որպես բնության աղետալի ուժերի թե՛ որպես համաստեղության համատեքստում:

Երրորդ գլուխը կրում է «Գեղարվեստական մետաղագործության» խորագիրը, այն նույնպես ունի երեք ենթագլուխ: Սույն գլխում ամենայն մանրամասնությամբ

դիտարկվում են կենաց ծառի շուրջ դեմ-դիմաց կանգնած սրբություններով ավանդական համարվող մոտիվները:

Ինչպես նկատում է ստենախոսը, ի տարբերություն ուրարտական կերպարվեստի այլ ճյուղերի՝ կենաց ծառի բեղմնավորման մոտիվը մետաղյա իրերի հարդարանքում ներկայացված է առավել բովանդակալից և ավարտուն: Մետաղյա առարկաների դրվաշարերում բավական բազմազան ու հետաքրքիր են սրբությունների ու կենաց ծառերի կերպարային լուծումներն ու պատկերագրական ոճը, որոնք հավանաբար Վանի թագավորությունում ընդունված երկրագործական ծեսերի խորհրդանշական սյուժեներ են եղել: Բացի այդ Վանի թագավորությունում մեծ տարածում է գտել ծիսական ընծայաբերման կամ զոհաբերության թեման: Վերը նշված սյուժեները իրենց կիրառումը գտել են ռազմական հագուստի և պահպանակ հմայիլների մեջ, թեպետ վերջիններում գերակշռում էին աստվածների պատկերումները:

Կարևոր ենք համարում նշել էպոսներից մեջբերումներն ու համեմատականները, որոնք տրվում են ուսումնասիրվող նյութին զուգահեռ:

Եզրակացություններում արտացոլված են համակողմանի վերլուծության արդյունքում կատարված եզրահանգումները:

Ընդհանուր օգտագործված գրականության ցանկը ներառում է 295 աղբյուր և 16 համացանցային աղբյուր: Հավելվածը ներկայացված է 47 համապարփակ աղյուսակի տեսքով:

Այս ամենի հետ մեկտեղ նշենք մեկ նկատառում.

- ցանկալի կլիներ բովանդակությունում ավելին լիներ արվեստաբանական վերլուծությունները:

Ստենախոսությունը ուսումնասիրվող նյութի իմացությամբ կատարված հիմնարար աշխատանք է, որում պահպանված են գիտական ուսումնասիրության բոլոր անհրաժեշտ չափորոշիչները: Այն հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է, որն իր արտացոլումն է գտել 13 գիտական հոդվածներում:

Աշխատանքը բավարարում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի «գիտության տվյալ

բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ դրա հեղինակ Գայանե Ռոբերտի Պոդոսյանը արժանի է ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանին:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ՝




Սաթենիկ Մելիքյան

Սաթենիկ Մելիքյանի

Ստորագրությունը հաստատում եմ

ՀՊԱՀ գիտ. քարտուղար

27.10.2021թ.



Մարիամ Բապիրյան